Ե. ԵՐԻՆԷ՝ ՔՈՑՐ ԵՐԵՄԻԱ ՁԻԼԷՊԻԻ.— Մեր աղբիւրները Երեմիայի սոյն միակ քրոջ մասին չեն տար որևէ տեղեկութիւն։ Միայն կը գտնենք որ ան կ'ապրէր տակաւին իր երէց եղբօր՝ Երեմիայի մահէն հինգ տարի ետք, այսինքն մինչև 1700 Սեպտ. 26 (1)։ Այդ օրը Երինէ դատ մը կ'ունենայ մի ոմն Զուղայեցիի հետ և մուրհակ (ձեռագիր) մը կը յանձնէ անոր։ Կը գրէ Ամգեցի նոյն թուականով. «Քօմրճու աղջիկ Երինէն տավի ընդ Զուղայեցոյն եւ ձեռագիր տվեց նոցա» (Օրագր. թղ. 248ա)։

Զ. ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆ.— Կարգը եկաւ գրելու Երեմիայի որդիներուն վրայ և տալու անոնց մասին լրացուցիչ տեղեկութիւններ։

Անոնց երէցն է Գրիգորիս վրդ. որ ծնած է Մհի. Ամբակումի վախճանէն (1658 Նոյ. 23) վեց ամիս ետք, այսինքն 1659 Մայիսի առաջին օրերուն։ Աւազանի անունը՝ Մհի. Ամբակումի կտակին համաձայն (Յաւել. էջ 589)՝ եղած է Ամբակում (2)։

Մեր Մատենադարանի Թիւ 1042 ձեռագրի (նկարագրութիւնը յետոյ) սկիզբը, թղ. 10ա–69բ, կան հետևեալ չորս Ներբողեաններն ու Գանձերը, ընդօրինակուած սոյն այս Ամբակում Քէօմիւրճեան պատանիի ձեռքով.

1. Թղ. 10ա–27բ. «Ներբողեան ասացեալ Եղընկացի Կարապետ վարդապետ Քօթ կոչեցելոյ, առ ի թաղումն վարդապետին իւրոյ Տեառն Պետրոսի կաթուղիկոսի Կառկարեցւոյ, եւ Տեառն Գրիգորի Ուր-

(1) Տոքթոր Թորգոմեան կ'ենթադրէ թէ սա հօրմէն առաջ վախճանած ըլլայ (Ստամ. Պատմ. էջ 755)։

(2) Տե՛ս նաև Ս. Էջմիածնի Թիւ 348 Աստուածաշունչի ցիշատակարանը, առ Հ. Ն. Ակինեանի, Ձէյթուն, էջ 222։